



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 9 - APRIL / ԹԻԻ 9 – ԱՊՐ ԻԼ 2018

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԶՍՏԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սուրբ Պահոց խորհրդավոր արարողություններին ետք երբ հաւատացեալներս մուտք կը գործենք Սուրբ, այսինքն Աւագ Շաբաթ, մեր սրտերը եւ մեր մտքերը կ'երթան 2000 տարի առաջ, ուր մեր հաւատացեալ նախնիքը մտահոգ էին եւ կասկածոտ թէ վատ բան պիտի պատահէր իրենց Վարդապետին՝ Քրիստոսին: Անորոշութիւն, հալածանք, ամբարտաւանութիւն, սպառնալիք եւ դաւաճանութիւն իրար խառնուած էին այդ շրջանին, եւ ահա՛, կը պատահէր անխուսափելին եւ կը ձերբակալուէր Արքան, կը խաչուէր իբր ոճրագործ եւ կը թաղուէր: Կը կարծուէր իր թաղումով կը թաղուէր ամէն ինչ, կը թաղուէր Վարդապետութիւնը, կը թաղուէր Սիրոյ Աստուածութիւնը, կը թաղուէր նոյն ինքն Աստուած: Օ՛ յիմարութիւն մարդկային եւ...



Օ՛ զարմանք: Միայն երեք օր ետք պիտի բացայայտուէր որ Ողջը մեռելներուն մէջ չէր: Ան դարձած էր Յարուցեալ: Յաղթանակի տօն էր, ոչ սուգի, որովհետեւ յաղթած էր Կենարարը մահուան եւ մեղքին: Իր գերագոյն զոհողութեամբ բայց անհուն սիրով, Քրիստոս կը փաստէր մարդկութեան թէ այսուհետեւ Խաչը խաղաղութեան խորհրդանիշ էր եւ ոչ տառապանքի ու չարչարանքի: Խաչելութիւնն ու Յարութիւնը մեզի կը պատգամեն ամէն օր ամրապնդել մեր քրիստոնէական հաւատքը եւ մեր կեանքի ամէն մէկ օրը յաղթանակի օրուան վերածել:

Յարուցեալին եւ յարութեան տօնը նշուեցաւ գաղութիս բոլոր Հայկական եկեղեցիներուն մէջ, Զացուտի Սուրբ Յարութիւն, Ուկնուրթփիլի Սուրբ Երրորդութիւն, Մելպուրնի Սուրբ Աստուածածին ինչպէս նաեւ Հայ այլ յարանուանութեանց եկեղեցիներուն մէջ: Զատիկը վերանորոգեց զմեզ, յուսադրեց մեզ եւ ամրապնդեց մեր հաւատքն ի Քրիստոս:



Եջ 29 Մարտ – Գերաշնորհ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեան, բարեխնամ Առաջնորդը Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմին մատուցեց Վերջին Ընթրիքի Եպիսկոպոսական Պատարագ իսկ կէսօրէ ետք՝ Ոսնլուայի արարողութիւնը, լուրով ոտքերը 24է աւելի մանուկներու, անգամ մը եւս յիշեցնելու բոլորիս թէ խոնարհութիւնը Քրիստոնէան բնորոշող յատկութիւնն է: 24 մանուկներու ներկայութիւնն ու մասնակցութիւնը կը փաստէին որ 20է աւելի Հայ ծնողներ փափաք յայտնած էին որ իրենց զաւակները զային եկեղեցի եւ Քրիստոնէական խոնարհութիւնը իրենց աչքով տեսնէին, որ, Սրբազան Հայրը կը բացայայտէ յօրինակ Քրիստոսի: Սրբազան Հայրը իր քարոզով անդրադարձաւ խոնարհութեան եւ սիրոյ գաղափարին եւ յորդորեց, որ անոնց գործադրութեան պէտք է ձգտի

իրաքանչիւր հաւատացեալ քրիստոնէայ: Նոյն գիշեր տեղի ունեցաւ խորհրդավոր արարողութիւնը « Խաւարման Գիշերուան», մասնակցութեամբ Սրբազան Հօր, Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի եւ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, սարկաւազաց եւ դպրաց դասերու: Արժ Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեան Խաւարման Գիշերուան արարողութիւնը կատարեց Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Իր խորիմաստ քարոզով Սրբազան Հայրը կարողացաւ հաւատացեալները փոխադրել այն օրերուն երբ տեղի կ'ունենար Վերջին Ընթրիքը, երբ Պետրոս կ'ուրանար զԻնք, երբ Յուդա կը ծախէր իր Տէրը...

Ուրբ 30 Մարտ – Խաչելություն Քրիստոսի: Պատիժն Արդարին, Անպատուութիւն Փրկչին, Քաղաքականութեան պարտադրած մահավճիռը Անմահին... Առաւօտուն Սրբազան Հօր եւ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծովի քահանաներուն մասնակցութեամբ տեղի ունեցաւ հոգեպարար արարողութիւն իսկ կէսօրէ ետք վերջին հրաժեշտի տխուր արարողութիւնը՝ Թաղումն Քրիստոսի:

Շաբաթ 31 Մարտ – Սրբազան հայրը ճրագաւոյցի Պատարագը մատուցեց Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ իսկ Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեան՝ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ, բազմահարիւր հաւատացեալներու ներկայութեամբ: Յիսնօրեայ Մեծ Պահքի շրջանը բոլորողներ իրենց աղօթքը բարձրացուցին առ Բարձրեալն եւ ստացան Սուրբ Հաղորդութիւն:

Կիրակի 1 Ապրիլ – Հազարի շուրջ բազմութիւն կը լեցնէր Սուրբ Յարութիւն Եկեղեցին եւ անոր շրջափակը: Պատարագիչն էր Սրբազան Հայրը, որ ընկերակցութեամբ Քահանայ հայրերուն, սարկաւագներուն, դպիրներուն եւ Լուսաւորիչ երգչախումբին նորակառոյց Առաջնորդարանի բակէն քալեց դէպի Եկեղեցի: Բազմահարիւր հաւատացեալներ հաղորդութիւն ստացան: Սրբազան Հայրն իր քարոզը յատկացուցած էր Յարութեան գաղափարին ու Հայ ժողովուրդի վերածնունդին: Ան յորդորեց բոլորս կառչելու մեր հայկականութեան եւ տէր կանգնելու ազգային մեր պահանջներուն: Յաւարտ Պատարագին Սրբազան Հայրը, քահանայից, սարկաւագաց, դպրաց դասերը, Լուսաւորիչ Երգչախումբի անդամներուն հետ պատշաճ շարականներու երգեցողութեամբ ժողովուրդին



հետ միասին ուղղուեցան դէպի Էտկարեան Սրահ, ուր տեղի ունեցաւ Տնօրինէք՝ աղի եւ հացի օրհնութիւն:

Առաջնորդարանի դահլիճին մէջ Սրբազան Հայրը, քահանայ հայրերն ու Թեմական Խորհուրդի անդամները ընդունեցին հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները, որոնք ըստ ընկալեալ աւանդութեան եկած էին շնորհաւորելու Սրբազան Հօր Զատիկը: Բարի գալստեան խօսք արտասանեց Թեմական Խորհուրդի ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեան, ապա իրենց շնորհաւորանքի, միասնականութեան ամրապնդման եւ շնորհակալութեան պատգամները փոխանցեցին Վաչէ Թովուզեան (ՄԴՀԿ), Կարօ Քէշիշեան (ՀՅԴ), Վիգէն Գալլօղլեան (Համազգային), Սարգիս Մանուկեան (ՀԲԸՄ), Ատէլ Գրաճեան (ՀՕՄ): Հիւրասիրութիւնը կատարեցին Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբի անդամները:

Բ2 2 Ապրիլ – Յիշատակ Մեռելոց: Իր մեռելները մոռցող ազգը դատապարտուած է մահուան: Մակայն այդ չէ ճակատագիրը Հայուն: Մեր մեռելները մեզի հետ միասին կ'ապրին եւ չեն մոռցուիր: Անոնք մեզի հետ են իրենց յիշատակներով, ուսուցումներով, խրատներով ու գործարանքով: Այս պատճառով է որ Հայ Եկեղեցին տաղաւար տօներու յաջորդող օրերը հռչակած է Մեռելոց Օր: Այս տարի եւս Սրբազան Հօր եւ երեք քահանայ հայրերու մասնակցութեամբ տեղի ունեցաւ ընդհանուր հոգեհանգիստ Մաքրարի Փարք գերեզմանատան յուշարձանին մօտ: Սրբազան Հայրը տուաւ իր պատգամը եւ հաւաստեց կարեւորութիւնը հողաթումբերուն ներքեւ անշնչացած մեր հարազատներուն, որոնց հոգիները կը հրճուին ի տես իրենց նկատմամբ մեր ցուցաբերած յարգանքին ու սիրոյն:

Երիտասարդաց Միութեան կողմէ: Ներկայ էին 50ի շուրջ Հայեր: Այս գեղեցիկ մտայնացումը մեծապէս



գնահատուեցաւ ներկաներուն բայց մանաւանդ Սրբազան Հօր կողմէ, որ իր քարոզին մէջ դրուատեց Հայ երիտասարդները, որ միասնական ուժերով պատրաստ են նեցուկ հանդիսանալու Հայաստանին եւ Արցախին: Ձեռնարկին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Արցախի Աւստրալիոյ մշտական ներկայացուցիչ Քալար Միքայէլեան: Երիտասարդները կազմակերպած էին նաեւ դրամահաւաք ի նպաստ Արցախին եւ անոր բանակին, որուն բոլոր ներկաները բերին իրենց մասնակցութիւնը: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ գաղութի Հայ երիտասարդութիւնը իր գիտակցութեան եւ իր միասնական գործունէութեան համար եւ կը մաղթէ նորանոր նուաճումներ ձեռք ձեռքի տարուած աշխատանքներու գործելադաշտին մէջ:

Բ2 2 Ապրիլի երեկոյեան, աաջին անգամ ըլլալով, Ս. Յարութիւն Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ արարողութիւն Արցախի քառօրեայ պատերազմին (2016) զոհուած նահատակներուն հոգիներուն ի հանգիստ: Ձեռնարկը կազմակերպուած էր Եկեղեցւոյ

Գ2 3 Ապրիլ – Սրբազան Հայրը նախագահեց Թեմական հերթական Ժողովին: Ժողովը լսեց Սրբազան Հօր և Առաջնորդարանին տարած միամտեայ բեղուն գործունեության տեղեկատվությունը: Ժողովը նաև զբաղեցավ Առաջնորդարանի շինարարության հարցերով, պիտակական և կահավորման, վաւերացուց Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի անդամները, և նախագիծ մը կազմեց Առաջնորդարանի բացման հանդիսութեան, որ պիտի կատարուի ձեռամբ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Կազմուեցաւ ընդհանուր գիծերու մէջ առժամեայ ծրագիր Վեհափառ Հայրապետին Նոյեմբերի 15-26 այցի անհրաժեշտութեամբ: Ժողովը լսեց տեղեկատվութիւն երեք ծուխերէն և կատարեց ցուցմունքներ առ ի գործադրութիւն: Ժողովը լայնօրէն զբաղեցաւ Մայիս 19-20 տեղի ունենալիք Թեմական Պատգամաւորական Ժողովի տեղեկագրական և կազմակերպական հարցերով: Թեմական այս գերագոյն ժողովը տեղի պիտի ունենայ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ նախագահութեամբ Սրբազան Հօր: Երիտասարդութեան խրախուսիչ տեղեկութիւնները նաև զբաղցուցին ժողովի մէկ կարեւոր մասը:

Ե2 5 Ապրիլ – Սրբազան հայրը 5-20 Ապրիլ մեկնեցաւ Պարսկաստան այցելելու համար Հայկական և Պարսկական պատմական հնավայրերը, որոնք մեծ դեր ունեցած են Հայոց պատմութեան զանազան հանգրուաններուն:

Դ2 11 Ապրիլ – Դիւանապետ Նշան Պատմաճեան ներկայացուց Սրբազան Հայրը եբրայական «*Եօլ Հաշուա*» յուշահանդէսին, որ տեղի ունեցաւ Հրէական Մասատա Գոլէճին մէջ, Սէյնթ Այվզ: Ձեռնարկը նուիրուած էր Հրէական ցեղասպանութեան, որ գործադրուեցաւ Գերմանիոյ Նացիներու կողմէն: Բանախօսներու շարքին էին Ճերմի Սփինաք և Վիք Ալիստէֆ: Վերապրողներ կատարեցին վկայութիւններ: Եղան բազմաթիւ վկայութիւններ և հոգեբանական վերլուծումներ վերապրողներու զաւակներուն և թոռներուն կողմէ Բանախօսութեանց ընթացքին անդրադարձ եղաւ նաև այլ ցեղասպանութիւններու, որոնց շարքին 20րդ դարու առաջինին՝ Հայոց Ցեղասպանութեան:

Վիք 15 Ապրիլ – Կազմակերպութեամբ Համագայինի Գրական-Գեղարուեստական Յանձնախումբին Գօլստըն Ճեմարանի մէջ տեղի ունեցաւ ոգեկոչման հանդիսութիւն նուիրուած գրգէտ, ազգային հասարակական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետութեան Խորհրդարանի նախագահ Մելիք Խաղաղութեան Դաշնագիրը ստորագրող Աւետիս Ահարոնեանին մահուան 70ամեակին առթիւ: Ձեռնարկը նուիրուած էր Հայաստանի առաջին անկախութեան 100ամեակին: Սրբազան Հօր բացակայութեան պատճառով զինք ներկայացուց Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան: Տէր Հօր ընկերակցեցան Թեմական Խորհուրդի ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեան, Փոխ Ատենապետ Ստեփան Գրգեաշարեան, Թեմական Խորհուրդի անդամ Գեորգ Զափրագեան և Դիւանապետ Նշան Պատմաճեան: Բարձրորակ այս ձեռնարկի արարտին Տէր Հայրը հակիրճ և կուռ խօսքերով վեր առաւ Ահարոնեանի արժանիքները և բարձր գնահատեց ձեռնարկի կազմակերպիչները, ապա « Պահպանիչ » ով փակեց ձեռնարկը:



Բ2 16 Ապրիլ – Դիւանապետ Նշան Պատմաճեան մասնակցեցաւ Ասորի Կաթողիկէ Եկեղեցոյ Իգնատիոս Պետրոս 8րդ Ապտէլ Ահատ նախկին Պատրիարքի վախճանման առթիւ Մերձատր Արեւելեան Եկեղեցիներու Եպիսկոպոսներու ցարակցական այցելութեան, որ տրուեցաւ Քասմուսա Եպիսկոպոսին Պրորուտի Our Lady of Mercy Syrian Catholic Churchի մէջ: Ողբացեալ պատրիարքը կը բնակէր Երուսաղէմ, ուր 87 տարիքին ան 4 Ապրիլին կնքեց իր մահկանացուն:



Ե2 19 Ապրիլ – Դիւանապետ Նշան Պատմաճեան մասնակցեցաւ NSW Ecumenical Councilի (NSWEC) վարչական հերթական եռամտեայ ժողովին: Ժողովը տեղեկացաւ երեք Յանձնաժողովներու տարած աշխատանքներուն՝ Միջ Կրօնական (Interfaith Commission), որ զարգաւորած է կազմակերպելով գիտաժողով մը, պիտի մասնակցի Միջազգային Խաղաղութեան Օրուան հանդիսութեանց, եւայլն), Աստուածաբանական Խորհրդածութեանց Յանձնաժողովին (Theological Reflection Commission) որ զբաղած է եկեղեցիներու մէջ վերապատրաստման աշխատանքներով, 27 Մայիսին կազմակերպած է Թայգէ եղբայրակցութեան հետ աղօթքի և խորհրդածութեանց երեկոյ եւայլն, և Խաղաղութեան և Արդարութեան Յանձնաժողովին (Peace and Justice Commission) որ զբաղած է մատչելի վարձքերով տուներ ապահովելու հարցերով, գործակցած է Pax Christiի հետ զէնքերու վաճառման դէմ աշխատանքներով եւայլն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր ներկայացուցիչները ունի NSWECի 5 յանձնաժողովներուն մէջ: Ժողովը տեղեկացաւ նաեւ Ընդհանուր Քարտուղարին (Շնուտա Քահանայ) եւ Նախագահին (Ուիս Շուիրինկայի) տարած եռամսեայ գործունէութեանց եւ բարձր գնահատեց զանոնք: Ժողովին հիմնական հարցերէն մին էր նաեւ Մայիս 12ին կայանալիք NSWEC Annual Fundraising Dinnerը, որ այս տարի առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ Ս. Յարութին Եկեղեցոյ Էտկարեան սրահին մէջ: Նշան Պասմաճեան զեկուցեց տարուած աշխատանքներուն մասին եւ գնահատեց իր գործակիցներուն աշխատանքը այս ուղղութեամբ: Այստեղ տեղին է յիշել որ մեր եկեղեցոյ հաւատացեալները դրական կեցուածք կը ցուցաբերեն այս ճաշկերոյթին, որուն հասոյթը պիտի տրամադրուի Յանձնաժողովներու գործունէութեան ընդարձակման:

Ուրբ 20 Ապրիլ – Նախագահութեամբ Սրբազան Հօր տեղի ունեցաւ Սուրբ Յարութին Եկեղեցոյ Ծխական Անդամական Ընդհանուր Ժողովը մօտ 80 անդամներու մասնակցութեամբ: Ժողովը վաւերացուց նախորդ տարուան ժողովի ատենագրութիւնը ապա տեղեկացաւ Հոգեւոր Հովիւի եւ Ծխական Խորհուրդի նիւթաբարոյական միամտեայ գործունէութեան եւ վաւերացուց յառաջիկայ շրջանին պիտուէն, եղան գանազան գործնական եւ շինիչ առաջարկներ: Կատարուեցաւ նոր վարչականներու ընտրութիւն: Նոր վարչական կազմը կը պարզէ հետեւեալ պատկերը. Տիկին Լօրա Արթինեան, Պարոնայք՝ Պետրոս Զօրլու, Զաւէն Եաղլճեան, Սարգիս Սուրատեան, Արա Գօփուշեան, Վազգէն Ամիրզայեան, Արմիկ Քոչարեանց, Աւօ Գարակեօզեան, Միհրան Լեփեճեան, Գեղամ Անուշեան, Արեգ Եափուճեան:

Շբ 21 Ապրիլ – Սրբազան հայրը նախագահեց Սուրբ Երրորդութին Եկեղեցոյ Ծխական Տարեկան Ընդհանուր ժողովին: Այս մասին կարդալ « Լուրեր Ծովերէն» բաժնին մէջ:

Կիր 22 Ապրիլ – Յաւարտ Սուրբ եւ անմահ Պատարագին տեղի ունեցաւ Հոգեհանգիստ ապա հոգեւորձ հրամցուեցաւ Սուրբ Յարութին Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի հօր՝ Սարգիսի մահուան քառասունքին առթիւ: Սրբազան հայրը դրուատանքով արտայայտուեցաւ հանգուցեալին կեանքին եւ գործունէութեան որպէս արուեստագէտ լուսանկարիչ, որ անսակարկ ծառայած է Սուրբ Էջմիածնի Վազգէն Վեհափառէն մինչեւ Գարեգին Բ Կաթողիկոսներու զահակալութեանց շրջաններուն:

Կիր 22 Ապրիլ – Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի, Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Թեմական Խորհուրդի Ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեանի, Փոխ Ատենապետ Ստեփան Գրգեաշարեանի եւ Դիւանապետին մասնակցեցաւ Արդարութեան Քայլարշաւին Սիտնիի կեդրոնը գտնուող Հայտ Փարքէն մինչեւ Սըրքիւլըր Քի: Քայլարշաւին, որ կազմակերպուած էր Յեղասպանութեան 103րդ տարելիցի միացեալ յանձնախումբին



կողմէ, մասնակցեցան մօտ 3000 Հայեր եւ Աւստրալացիներ, որոնց կարգին Օերակուտական Ֆրէտ Նայլ, միջազգային վիպագիր Քրիս Պօհճէլեան, հայկական հոգեւոր, քաղաքական թէ՛ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, դպրոցականներ: Մասնակիցները կ'առաջնորդէր ՀՄԸՄի սկաուտական փողերախումբը: Սըրքիւլըր Քիի մէջ ժողովուրդը դիմաւորուեցաւ Սրբազան Հօր կողմէ: Պատրաստուած կոկիկ եւ տպաւորիչ յայտագիրը կ'ընդգրկէր հակիրճ խօսքեր Ֆրէտ Նայլի, Քրիս Պօհճէլեանի, Վաչէ Գահրամանեանի, Գեորգ Վարդանեանի կողմէ: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցու-



թիւնը բերին Համագգային Սիտնիի Պարի Անսամպլի եւ Նայրիի Պարախումբի պարուհիները, ինչպէս նաեւ Գօլստըն Ճեմարանի աշակերտները: Իր խօսքին մէջ Սրբազան հայրը անդրադարձաւ 1918 Էն 1923 Աւստրալիոյ Հայութեան ցուցաբերած զօրակցութեան եւ պահանջեց որ դաշնակցային կառավարութիւնն ու թուրք պետութիւնը ճանչնան ցեղասպանութիւնը: Ողջունելով Ապօրիճիներու դրօշակին Աւստրալական եւ Հայկական դրօշներու կողքին ծածանիլը, Սրբազան Հայրը ըսաւ թէ Աւստրալական պետութիւնը ճանչնալով իր նախնիներուն սխալները եւ ներողամտութիւնը հայցելով Ապօրիճիներուն՝ ցոյց տուաւ զօրութիւն եւ ո՛չ տկարութիւն, խելահասութիւն ու մարդկային յարգանք: Սրբազանը գովեց երիտասարդութիւնը, որուն թելադրեց զօրակից կանգնիլ եւ եզրափակեց ըսելով՝ « այնքան ատեն որ երիտասարդութիւնը այսպիսի պահանջատիրութեամբ կը ներկայանայ, Ցեղասպանութիւնը չի մոռցուիր եթէ նոյնիսկ 100 կամ 200 տարիներ ալ



անցնին անոր գործադրութեան թուականէն»: Սրբազան Հայրը Վերապատուելի Յակոբ Սարգիսեանին հետ միատեղ կատարեց փակման Տէրունական Աղօթքը:



Կիր 22 Ապրիլ – Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, ՊՊ Ստեփան Գրգեաշարեանի եւ Նշան Պասմաճեանի ընկերակցութեամբ Սրբազան Հայրը ՀԲԸՄի ակումբին մէջ մասնակցեցաւ Եղեռնի ոգեկոչման հանդիսութեան կազմակերպուած ՀԲԸՄի Սիտնիի մասնաճիւղի վարչութեան կողմէ: Գլխաւոր բանախօսն էր Հոնկ Քոնկ բնակող Դոկտ. Վահագն Վարդանեան որ բանախօսեց «Armenia, Diaspora Connection through spaces» նիւթին մասին: Բանախօսը պատմական իրողութիւններ պարզեց Ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ ինչպէս նաեւ Սեւրի դաշնագրի պատմական կարեւորութեան մասին: Իր բացման խօսքին մէջ ՀԲԸՄի գործադիր տնօրէն Սարգիս Մանուկեան շեշտը դրաւ թէ ինչ պէտք է յիշել եւ ինչ պահանջել, անդրադարձաւ նաեւ տարբեր միջազգային դաշնագրերուն եւ կատարեց վերլուծում անոնց տուած արդիւնքներուն: Նախ քան փակման աղօթք՝ Սրբազան Հայրը զգուշացուց որ Հայ երիտասարդին մօտ Հայրենասիրութեան նուազում պէտք չէ արձանագրուի եւ թէ Հայաստանի անկախութեան հարիւրամեակին շեմին պէտք է լիցքաւորել երիտասարդութիւնը եւ զօրակցիլ անոր, որովհետեւ երիտասարդութիւնն է որ օր մը կրնայ մեզ առաջնորդել դէպի ամբողջական Հայաստանի մեր երազներուն իրականացման:

Բշ 23 Ապրիլ – Ընդառաջելով խումբ մը Հայերու եւ Հայուհիներու խնդրանքին, Սրբազան Հօր, Հոգեւոր Հովի Տէր Աւետիս Քահանայի եւ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի հաւանութեամբ մօտ 150 անձեր հաւաքուեցան Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ շրջափակը, եռագոյն դրօշներ եւ լոգունգներ պարզած, արտայայտելու համար իրենց բողոքը նախկին նախագահ եւ նշանակեալ վարչապետ Սերժ Սարգիսեանի իր պաշտօնէն չհրաժարելուն եւ իրենց զօրակցութիւնը ցուցաբերելու Երեւանի մէջ խաղաղ ցուցարար իրենց եղբայրներուն եւ քոյրերուն: Հաւաքուած քաղաքավար եւ կիրթ բազմութիւնը մէկ մարդու նման հնչեցուց Հայաստանի քայլերգը եւ որոշեց Ապրիլի 25ին Բայտի բացօթեայ դաշտի մը մէջ շարունակել իր խաղաղ ցոյցը իսկ եթէ մինչ այդ Սարգիսեան հրաժարի տօնել ժողովրդային յաղթանակը: Տէր Աւետիսի փակման աղօթքով ցրուեցաւ ժողովուրդը:



ԳՉ 24 Ապրիլ – Մօտ երեք հարիւր հաւատացեալներու մասնակցութեամբ Սուրբ Յարութին Մայր եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ Եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագ ներկայութեամբ Հայկական համարեա բոլոր կազմակերպութեանց ներկայացուցիչներուն, աշակերտներու եւ ՀՄԸՄի սկաւառներու: Պատարագի աւարտին հաւատացեալներուն միացաւ Ուիլյուպի քաղաքապետուհին՝ Տիկին Կելլ Ճայլզ Կիտնին: Սրբազան Հօր հոգեպնդող քարոզէն ետք ժողովուրդը շարժեցաւ դէպի Պօշան Փարք, (մօտ 400 մէթր հեռու եկեղեցիէն) առաջնորդութեամբ ՀՄԸՄի փողերախումբին եւ մօտ 40 սկաւառներու եւ գայլիկներու: Զացուտտի ոստիկանութիւնը նախօրօք տուած էր իր արտօնութիւնը, հետեւաբար քայլերթը եղաւ ոստիկանութեան հսկողութեան տակ ապահովութեան համար: Պօշան Փարքի Խաչքարին մօտ տեղի ունեցաւ արարողութիւն մասնակցութեամբ Սրբազան Հօր, Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի, Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեանի, Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Սարկաւազներուն: Երիտասարդութեան անունով խօսք առաւ Ճօհաննէ Միքայէլեան որ բացատրեց թէ ապրող յոյսը Թուրքիոյ կողմէ ցեղասպանութեան ճանաչում չէ, այս վայրկեանիս Հայաստանի Հանրապետութիւնն է: Թուրքիան այս լաւ գիտէ: Թուրքերը գիտեն որ սփիւռքահայութեան առաջնահերթ յոյսը Արեւմտահայաստանը վերադարձնելն է: Անոնք լաւ գիտեն որ այնքան ատեն որ իրենք կը մերժեն Տեղասպանութեան ճանաչումը այդքան Հայութիւնը պիտի պահանջէ եւ պիտի յուսայ:



Քաղաքապետուհին խօսք առնելով իր շնորհակալութիւնը յայտնեց որ Սրբազան Հայրը զինք ամեն տարի մասնակից կը դարձնէ այս կարեւոր միջոցառման: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Սրբազան Հօր, Թեմական Խորհուրդի ատենապետին ու փոխ ատենապետին, որոնք անցեալ Յունիսին իր Հայաստան այցելութեան ընթացքին զինք դիմաւորեցին Երեւանի մէջ եւ առիթներ ստեղծեցին որ ինք տեսակցութիւններ ունենար Վեհափառ Հայրապետին, Սփիւռքի Նախարարին եւ աշխատակազմին, Երեւանի Քաղաքապետին հետ եւ կարենար Նոր Նորքի եւ Ուիլյուպի քոյր քաղաքներու պաշտօնական համաձայնագիրը ստորագրել: Իր եզրափակիչ խօսքին մէջ Սրբազան Հայրը վեր առաւ արժանիքները Տիկին Կիտնիի եւ շնորհաւորեց զայն իր Հայաստան կատարած ճամբորդութեան համար: Սրբազանը զովասանքով արտայայտուեցաւ Հայ երիտասարդութեան մասին եւ անոնց ուժ ու կորով մաղթեց կանգուն մնալու եւ իրենց պահանջատիրութիւնը կրկնապատկելու մեր արդար դատին համար: Հաւաքը աւարտեցաւ Տէրունական Աղօթքով ժողովուրդին մասնակցութեամբ:



ԳՉ 24 Ապրիլ – Մօտ 1000 հանդիսականներ հաւաքուած էին սրահին մէջ վերանորոգելու համար իրենց ուխտը հետապնդելու մեր արդար դատը՝ մինչեւ յաղթանակ: Տեղասպանութեան 103րդ Տարեդարձի ոգեկոչման հանդիսութիւնը կազմակերպուած էր Ոգեկոչման Միացեալ յանձնախումբին կողմէ: Ընդառաջելով սոյն յանձնախումբի հրաւերին Սրբազան Հայրը, Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը, Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան, Թեմականի ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեան, փոխ ատենապետ Ստեփան Գրգեաշարեան, Թեմականի անդամ Գեորգ Զափրագեան, Սուրբ Յարութին Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Պետրոս Զօրլու եւ Դիւանապետ Նշան Պասմաճեան ներկայ եղան միջոցառմանը: Ներկայ էին բազմաթիւ քաղաքական դէմքեր, ի միջի այլոց Նահանգապետուհի Գլատիս Պերէճիքլեան, որ նաեւ հանդէս եկաւ իր քաղաքական պատգամով: Խօսք առին Յատուկ այս առիթով հրաւիրուած Վիպարան Քրիս Պօհճէլեան (ԱՄՆ) եւ



Փրոֆ Սարի Արմուտեան (Նոր Զելանտա), որոնց խօսքերը կարելի է լսել *Արևելահասնլայնի* վրայ: Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ ըսաւ թէ ան այստեղ կեցած էր ֆիզիքապէս սակայն մտքով ու հոգով ուրիշ տեղ էր, ինք Ամերիկեան եւ Հայաստանի քաղաքացիութիւն կրելով հանդերձ, Սուրիա ծնելով, Լիբանան եւ Աւստրալիա ապրած ըլլալով եւ ապրելով հանդերձ պատկանելիութիւն չզգար անոնց: Ինչո՞ւ այս զգացումը, եւ ի՞նչ է այդ խորհրդաւոր հողը որուն կապուած կը զգայ, հակառակ զայն տեսած չըլլալուն եւ միայն գիրքերով ու պատմութեամբ հաղորդակից դարձած ըլլալու անոնց: «Այդ արիւնն է եւ ոգին իմ պապերուս, որոնք ապրեցան այդ հողին վրայ դարեր շարունակ եւ որ կը

կոչուի Հայաստան»: Ապա խօսելով Աւստրալիոյ դաշնակցային կառավարութեան Յեղասպանութիւնը չճանաչելուն մասին՝ Սրբազանը ըսաւ (ցոյց տալով Աւստրալիոյ դրօշը) թէ յուսով է թէ օր մը այս դրօշն ալ պիտի ծածանի միւսներուն մօտ (ցոյց տալով Յեղասպանութիւնը ճանչցող երկիրներու դրօշները): Սրբազան Հայրը բեմ հրաւիրեց Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիներու հովիւներ՝ Գերյարգելի Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեանն ու Վերապատուելի Յակոբ Սարգիսեանը որպէսզի միասնական աղօթքով փակեն հանդիսութիւնը: Երեք եկեղեցապետերու եւ ժողովուրդին միասնական Տէրունական Աղօթքով փակուեցաւ այս կոկիկ եւ իմաստալից հանդիսութիւնը:

ՊՁ 25 Ապրիլ – Ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, ՊՊ Ստեփան Գրգեաշարեանի եւ Նշան Պասմաճեանի, Սրբազան Հայրը ներկայ եղաւ Գամեայ քանոնահար Քրիստինէ Ենկոյեանի ելոյթին դաշնամուրի ընկերակցութեամբ իր ուսուցչուհիին՝ Ծովինար Յովհաննիսեանի: Այս հրաշք երէխան Աւստրալիա հրաւիրուած էր Warner Brothers Entertainment Little Big Shots հեռատեսիլի ծրագրին համար : Առիթէն օգտուելով ՀԲԸՄի Սիտնիի վարչութիւնը կազմակերպեց ելոյթ մը որմէ գոյացած եկամուտը 4620 Ա.Ն. Տոլար յատկացուեցաւ Քրիստինէի ուսման կատարելագործման: 100է աւելի հանդիսականներ որոտընդոստ ծափերով եւ յուզումն իրենց աչքերուն հետեւեցան հանդէսին: Քանոնի լարերը կը դողային ու կը դրդոյային այս անհամեմատ տաղանդով օժտուած աղջնակին զարկերէն: Ան նուազեց միջազգային եւ Հայկական երաժշտական գլոբլի գործոցներ: Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ ըսաւ. «Եթէ Ծովինարներ անսակարկ ներդրում չունենային այս հրաշքը չէր պատահեր, իսկ եթէ 103 տարի ետք այս ժողովուրդը այսպիսի միջազգային համբաւով հրաշքներ կը ծնի՝ ուրեմն այդ ժողովուրդը չի մեռնիր»: Սրբազան Հօր աղօթքով եւ բարեմաղթութիւններով փակուեցաւ այս աննախընթաց ձեռնարկը:



Ուրբ 27 Ապրիլ – Բանոյեան Կեդրոնին մէջ (Արեւմտեան Սիտնի) տեղի ունեցաւ Յարգանքի Երեկոյ Հայ Նահատակ Սուրբերու, կազմակերպուած Համազգային Մեան Մասնաճիւղին կողմէ, մասնակցութեամբ աւելի քան 120 ներկաներու: Սրբազան Հայրը ներկայացուց Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Տէր Հայրը իր հակիրճ փակման խօսքին մէջ շնորհաւորեց ձեռնարկը պատրաստողները եւ մասնակիցները, մաղթելով խաղաղութիւն մեր Հայրենիքին եւ միասնականութիւն Սփիւռքահայութեան: Տէրունական Աղօթքով փակուեցաւ այս տպաւորիչ ձեռնարկը:

Շբ 28 Ապրիլ – Բայտ Քաղաքապետության հրաւերով, Մետոպանքի յուշաքարին մօտ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 103րդ տարեդարձին նուիրուած աւանդական յարգանքի հաւաքը, գլխատրութեամբ Բայտի քաղաքապետութեան անդամ Սարգիս Ետէլեանի: Ներկայ էին բազմաթիւ քաղաքական դէմքեր, Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները եւ ՀՄԸՄի սկաուտական կազմը: Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց Բայտի քաղաքապետութեան, Սարգիս Ետէլեանի առաջարկով անգամ մը եւս միաձայնութեամբ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը ինչպէս նաեւ բոլոր քաղաքական դէմքերուն, Հայ համայնքին եւ Հայաստանի նկատմամբ իրենց ցուցաբերած անկեղծ յարգանքին, յուսալով որ Բայտի այս կեցուածքը օրինակ կը հանդիսանայ նաեւ այլ քաղաքապետարաններու բայց մանաւանդ Դաշնակցային Կառավարութեան ճանաչելու Հայոց Ցեղասպանութիւնը: Սրբազան Հայրը, Արժանապատիւ Տէր Նորայր Քահանայ Բաթանեանի եւ Աւետիս Քահանայ Համբարձումեանի հետ միասին կատարեց փակման աղօթքը:



Պատարագի տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին գաղութի Հայութիւնը իրարու ծանօթացան եւ վայելեցին Տէր Հօր ներկայութիւնը: Իր մասնակցութիւնը եւ գնահատանքը արտայայտեց նաեւ Ողբացեալ Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաուրեանի դասընկերներէն University of South Australia Associate Professor John Van Der Hoek: Ան վեր առաւ վախճանեալ Սրբազան Հօր մարդկային թէ հոգեւոր արժանիքները:

Շբ 28 Ապրիլ – Սրբազան Հօր կարգադրութեամբ Արժանապատիւ Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեան մեկնեցաւ Ատրլէյտ պատարագ մատուցանելու Հայ փոքրիկ գաղութի հաւատացեալներուն համար: Տէր Հայրը երկրորդ անգամ ըլլալով պատարագեց Տէր Ստեփաննի եկեղեցոյ մէջ շուրջ 40 հաւատացեալներու մասնակցութեամբ, որոնք նաեւ ստացան հաղորդութիւն: Պատարագին մասնակից եղաւ եկեղեցոյ հովիւ, ծագումով Լիբանանցի, Ճորճ Քիրրէ քահանան, որ խօսք առաւ Արաբերէնով եւ կատարեց իր բարեմաղթութիւնները Հայ Համայնքին: Տէր Պարթեւ քարոզեց բնաբան ունենալով Յարութիւնն ու Խաչը: Յաւարտ

Կիր 29 Ապրիլ – Առաջնորդարանի աւանդական տարեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ ՕԸՍՕ հիւրասրահին մէջ, ներկայութեամբ 210 հանդիսականներու, Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներու եւ հիւրերու: Հրաւիրեալ հիւրերէն ներկայ էին՝ Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան, Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեան, Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Վերապատուելի Գրիգոր Եոմուշաքեան իրենց երեցկիներով, Խորհրդարանի անդամ Տամիէն Թիւրքոօփ, նախարար Փօլ Ֆլէշըր, Ուիլյամսի քաղաքապետուհի Կելլ Ճայլզ Կիտնի:

Կամքէ անկախ պատճառով կը բացակայէր նահանգապետուհի Գլատիս Պերէճիքլեանը, որ իր սրտի խօսքը ուղարկած էր զայն կարդալու համար հանդիսութեան ընթացքին: Խանդավառութիւն կը տիրէր բոլոր ներկաներուն մօտ, որոնք գիտակից Առաջնորդարանի առաքելութեան եկած էին սատար հանդիսանալու եւ մասնակից դառնալու այս կարեւոր հաստատութեան ամենօրեայ ծախսերուն ապահովման գործին:





Քառամսեայ բժախնդիր պատրաստութեան արդիւնք էր այս կազմակերպուած եւ նպատակին ծառայող ձեռնարկը: Յանձնախումբի անդամները, յանձինս Տիկնայք Լօրա Արթինեանի, Նորա Պաստաճեանի, Թալին Մարգարեանի, Մարալ Սիմոնեանի, Ջեփիտ Մուրատեանի, Քլար Յարութիւնեանի, Կարինէ Գրգեաշարեան-Վանգայի եւ Պրն Նշան Պասմաճեանի, կարողացած էին Գաղութի Հայութեան ներկայացուցիչները համախմբել իրենց հոգեւոր հօր շուրջ, թիկունք կանգնելու անոր եւ Առաջնորդարանին՝ անոնց կատարած ազգանուէր գործունէութեան: Յանձնախումբը կրցած էր նաեւ ի մի բերել գաղութիս տաղանդաւոր երիտասարդ արուեստագէտները, որոնք իրենց բարձրորակ ելոյթներով զարմանք պատճառեցին ներկաներէն շատերուն:

Հանդիսավարուի Տիկն Լորա Պաստաճեան, Հայերէնով թէ Անգլերէնով, իր հիմնուրախատն արտայայտութիւններով, կարողացաւ ուրախ մթնոլորտի մէջ պահել ներկաները: Հանդիսութիւնը սկսաւ ժամը 6ին Տէրունական Աղօթքով եւ սեղանի օրհնութեամբ: Հանդիսավարի սեղմ բացման խօսքէն ետք, Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Մարգիս Տէր Պետրոսեան Հայերէն լեզուով ողջունեց ներկաները եւ հակիրճ բացատրութիւն տուաւ Առաջնորդարանի գործունէութեան մասին: Տաղանդաւոր կիթառիստ, մրցանակներու արժանացած արուեստագէտ Սագօ Տէրմէնճեան, Ուոլթընի կոնկրէտ յատուկ այս առիթով ժամանած էր, նուագելու համար երեք գեղեցիկ եւ դասական կտորներ, հմայելով բոլորս: Հալէպէն երկու տարի առաջ ժամանած այս հայորդին արդէն իր տեղը գտած է Աւստրալական արուեստի աշխարհին մէջ եւ մասնակցած բազում ելոյթներու: Յայտնութիւն մըն էր նաեւ Սթեֆանի Պաստաճեանը, որ Պարոյր Սեւակի «Քիչ ենք բայց Հայ ենք» բանաստեղծութեան անգլերէն թարգմանութիւնը արտասանեց կուռ ձայնով եւ ճիշտ շեշտադրումով, տպաւորելով ոչ միայն Հայ հանդիսատեսները բայց նաեւ ոչ Հայ հիւրերը: Սթեֆանիի ասմունքային կարողութիւնները մեծ են, պէտք չէ կանգ առնել:



Միտնիի Հայ բեմերուն սոխակը՝ Մեցցօ Սօփրանօ Իգալէ Մարգարեանը մեներգեց Կոմիտասի «Մարերի Հովին Մեռնեմ»ը դաշնամուրի ընկերակցութեամբ հանրածանօթ դառնալու ճամբուն վրայ Ալէքս Սահակեանի: Սահակեան նաեւ ընկերակցեցաւ Թաւ ջութակահար Նաթալի Մինասեանի, որոնք նուագեցին Էտուարտ Պաղտասարեանի «Նոքթիւրն»ը: Միտնիի մէջ կան բազում տաղանդներ գորս պէտք է գտնել եւ քաջալերել, անոնցմէ ամիս ձրիաբար կը ծառայէ Հայրենիքի մէջ իր Հայու պարտականութիւնը կատարելով Հայրենի ժողովուրդին: Ալէքս Սահակեան նուագեց Գասապեանի դաշնամուրի համար յօրինումներէն մին:

Առաջին անգամ ըլլալով եւ կարճ ժամանակամիջոցի մէջ կազմուած Հայ Եկեղեցւոյ Երիտասարդական Երգչախումբը եռաձայն ներկայացուց Կոմիտասի Հոյ Նազանն ու Կարա Մուրգայի՝ Ջինչ ու Ջինչը: 10 երիտասարդներէ բաղկացած այս երգչախումբը, գլխաւորութեամբ Լիլիթ Մուրատեան-Մինասեանի, դիմաւորուեցաւ ծափողոյններով որպէս գնահատանք իրենց ներդաշնակ երգեցողութեան: Այս երգչախումբը պէտք չէ որ այստեղ կանգ առնէ...:

Շարունակաբար ելոյթ ունեցան Գեորգ Մուրատեան՝ Սաքսոֆոնով, որուն դաշնամուրով ընկերակցեցաւ դաշնակահարուհի եւ երգչուհի Լիլիթ Մուրատեան-Մինասեան: Գեորգ, հմուտ եւ ինքնավստահ, նուագեց Արամ Խաչատուրեանի «Օրօրոցային» կտորը արժանանալով ներկաներուն բարձր գնահատանքին:

Երկու Հալէպահայ արուեստագէտներ, Քանոնահար Մեղրի Ունձեան եւ Տնօրէն Յովսէփ Ամիրզայեան կատարեցին Տրապիզոնի Պարը: Անոնք կարողացան ոչ Հայ հիւրերուն ներկայացնել ազգագրական մեր երաժշտական աստղային:

Խորհրդարանական Տամիէն Թիւրքիոյ ընթերցեց նահանգապետուհիին սրտի խօսքը ապա իր խօսքը ուղղեց ներկաներուն: Պարոն Թիւրքիոյ ճանչցուած է իր հայասիրութեամբ եւ քրիստոնէական արժէքներու պահպանման ջատագովութեամբ:



Խօսք առաւ նաեւ նախարար Փօլ Ֆլէչքըր, որուն առաջին մասնակցութիւնն էր Առաջնորդարանի կազմակերպած ձեռնարկի մը: Ի տես եւ ի լուր կատարուածին, Ֆլէչքըր դրուատեց տարուած հաւաքը եւ խոստացաւ նեցուկ հանդիսանալ մարդկային արժէքներու պահպանման գործընթացին, որուն ջատագովներէն մին է Հայ Եկեղեցին:

Քաղաքապետուհի Կիտին, անգամ մը եւս հպարտացաւ իր քաղաքի հայութեամբ, որոնք իրեն միշտ զօրաւիգ կանգնած են եւ վերստին խոստացաւ զօրակցիլ Հայ համայնքին եւ եկեղեցոյ:

Թեմական Խորհուրդի փոխ ատենապետ Դոկտ Ստեփան Գրգեաշարեան անգլերէն լեզուով, սեղմ սակայն բովանդակալից տեղեկութիւն տուաւ Առաջնորդարանի շինարարական աշխատանքին աւարտական փուլին մասին, յայտնելով ներկաներուն ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նոյեմբերին Սիսի այցելութեան մասին եւ Առաջնորդարանի պաշտօնական բացման՝ 18 Նոյեմբերին:

Երաժիշտ Արաքս Մանսուրեանի աշակերտուհի, ծագումով Յոյն Ճորճիա Քոքոբիս, իր թաւշային գեղեցիկ ձայնով մեներգեց մօտ 40 վայրկեան: Ճորճիայի երգացանկին վրայ էին նաեւ Հայերէն երգեր ինչպէս Կոունկ, Չինար Ես, Ծիարանի Ծառ: Մանսուրեանի ցանած սերմերը արդէն ծլած են եւ ան Ճորճիայի օրինակով հինգ ոչ Հայ աշակերտներ հասցուցած է, որոնք Հայերէն, յատկապէս Կոմիտաս կ'երգեն: Անոնցմէ մին է դաշնակահար Նաթանայէլ Քոնկ, որ ընկերակցեցաւ Ճորճիային:

Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը ուր իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր անոնց որոնք այս ծրագիրը յաջողցուցին: Ան բացատրեց կարեւորութիւնը Առաջնորդարան հաստատութեան եւ կատարելիք աշխատանքին ծիրը Հայ թէ Աւստրալական լայն շրջանակներուն մէջ: Սրբազան Հայրը, ինչպէս ՊՊ Տէր Պետրոսեան եւ Գրգեաշարեան, մեծ գնահատանքով արտայայտուեցաւ մօտ 40ի հասնող երիտասարդներուն ներկայութեան մասին, անոնց մէջ տեսնելով ապագան եւ շարունակականութիւնը մեր գաղութին ու եկեղեցոյն:

Թէեւ ծրագրուած չէր որեւէ հանգանակութիւն կատարել ճաշկերոյթի ընթացքին սակայն խանդավառուած տիրոջ մթնոլորտէն, ազգայիններ կատարեցին մօտ 30000 Տոլարի նուիրատուութիւն յօգուտ Առաջնորդարանի շինարարութեան ծրագրին:



Լուրեր Ծուխերէն

ՄԵԼՊՈՒՐՆ - Ս. Աստուածածին Եկեղեցի

Մելբուռնի Ս. Աստվածածին Եկեղեցում հայրորդիների ակտիվ և խանդավառ մասնակցությամբ կատարվեցին Զատիկական տոների խորախորհուրդ արարողակարգերը՝ Ոսնլվա, Խավարում, Թաղման Թափոր, Ճրագալույցի և Ս. Հարության Պատարագներ
Մարտ 31-ի ճրագալույցի Ս. Պատարագի վերջավորության եկեղեցական Թափորը շարժվեց Եկեղեցու սրահ ուր կատարվեց տնօրինեք և արդեն գեղեցիկ ավանդություն դարձած Զատիկական խրախճանքը:



Մեծ եղեռնի ոգեկոչման Ապրիլ 24-ի 103-րդ տարելիցի առիթով Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցու Ապրիլ 22 - ին մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարգ Ազինյան և Մեսրոպ Մաշտոց Մաթնոսյան դպրոցների աշակերտների մասնակցությամբ, Ս. Պատարագի վերջավորության եկեղեցական թափորը շարժվեց Եկեղեցու սրահին կից Եղեռնի Ս. Նահատակների նվիրված խաչքարի մոտ: Կատարվեց Բարեխոսական և գոհաբանական աղոթք Եղեռնի Ս. Նահատակների հիշատակության առիթով:

Ապրիլ 23-ին "Դանդենոզ Թաուն" սրահում կատարվեց համագաղութային Մեծ Եղեռնի ոգեկոչման երեկո, որի ընթացքում եղան Բանախոսություններ և մշակութային ձեռնարկներ: Երեկոն ավարտվեց "Տեր Ողորմես" շարականով և աղոթքով:

Ապրիլ 24-ին Եղեռնի Ս. Նահատակների 103-րդ տարելիցի առիթով Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց հսկումի ժամերգություն

ՈՒԷՆԹՈՒԸՐԹՎԻԼ - Ս. Երրորդութիւն Եկեղեցի

Սուրբ Երրորդութիւն Եկեղեցույ Շխական Խորհուրդի Վարչութիւնը գումարեց իր տարեկան անդամական ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 21 Ապրիլին, կէսօրէ ետք ժամը 5.30-ին, Պաթմանեան Սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տեր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի:

Սուրբ Երրորդութիւն Եկեղեցույ Շխական Խորհուրդի 2018ի Վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ անձերէն.

- Վազգէն Զ Եկէնեան – Ատենապետ
- Կարօ Գոյումձեան – Փոխ Ատենապետ
- Վազգէն Յակոբեան – Ատենաղպիր (Հայերէն)
- Կարօ Արապեան – Ատենաղպիր (Անգլերէն)
- Փայլակ Դաւիթեան – Տիկնանց Օժանդակ Մարմնի մօտ Լիազօր ներկայացուցիչ
- Արամայիս Աւետիսեան – Դպրաց Դասի մօտ Լիազօր ներկայացուցիչ
- Կարապետ Ալաճաճեան – Խորհրդական



ՔՈՒՒՆԱԼԱՆՏ

Հետևեալ Թղթակցութիւնը ստացած ենք Քուինսլանտի մեր թղթակցուհի Արմինէ Յակոբեանէն:

Նախ շնորհավորանքներս ընդունեք Հայաստանում հայ ժողովրդի հաղթանակի առթիւ: Այսօր, երբ ամեն տարի մեր սրտերը տխրությամբ ու կսկիծով էր համակվում ամեն տարի՝ հիշելով մեր ազգի անմեղ զոհերին, մենք չենք կարող թաքցնել մեր ուրախությունը, և շատ ուրախ էինք տեսնել, որ մեր հայ եկեղեցու անդամներն էլ էին ժողովրդի կողքին:



Ինչպես խնդրել էիք, Ձեզ եմ ուղարկում համայնքի նորությունները:

Այսօր, 24 Ապրիլին, Բրիսբան քաղաքում տեղի ունեցավ Քուինսլենդի Հայ համայնքի հավաք՝ նվիրված Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին:

Երեկոն սկսվեց Ավստրալիայի և Հայաստանի հիմները երգելով: Power Point presentation ներկայացվեց Հայոց ցեղասպանության մասին, ինչպես նաև համայնքի անդամների ծանոթության համար պատին փակցվեցին Ավստրալիա/Նոր Զելանդիայի քաղաքացի Լեն Ուիքսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարվող պայքարին վերաբերող աշխատանքները:

Համայնքի անդամներ Մարտիկ Բերբերյանը և Լուսին Մադարյանը անզլերեն և հայերեն լեզուներով խոսք ասացին Հայոց ցեղասպանության մասին, որից հետո տեղի ունեցավ այդ մասին երկու վավերագրական կարճ ֆիլմերի դիտում: Երեկոն ավարտվեց Տերունական աղոթքով:

Հավաքի Հայոց ցեղասպանությանը վերաբերող մասի ավարտից հետո Մուշեղ Խուրշուդյանը ներկայացրեց Հայաստանում տիրող ներկա իրադրությունը՝ արտահայտելով բոլորի խանդավառությունը վարչապետի հրաժարականի, ժողովրդավարության հաստատման վերաբերյալ, ինչպես նաև հաստատելով համայնքի աջակցությունն այս իրադարձություններին:

Օքլանտ, ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ



2018ը նշանակալից թուական մը պիտի ըլլայ աշխարհի Հայութեան համար բայց յատկապէս Օքլանտի Հայ համայնքին համար:

Մինչ հպարտանքով կը դիմաւորենք Մայիսին տօնելու հարիւրամեակը Հայաստանի անկախութեան, Մէտօուտ Փարքի մէջ կը պատրաստուինք զետեղելու Հայ Բարեկամութեան Յուշաքար մը ապացուցելու համար մեր յատուկ կապը այս շրջանին հետ եւ ամրապնդելու համար մեր յատուկ յարաբերութիւնը Մէտօուտ Հաուսի եւ անոր բազմամշակոյթ համայնքին հետ :

Նոր Զելանտայի հայկական Միութիւնը հպարտ է յայտնելու որ կը ներկայանայ որպէս միակ երաշխաւորը այս պատմական ծրագրի իրագործման: Մենք բախտաւոր ենք ունենալու ձեզ նման գիտակից եւ զօրակցող համայնք Նոր Զելանտայի Հայկական Միութեան տարած

հայանպաստ աշխատանքներուն: Կը խնդրենք բերել ձեր նիւթական մասնակցութիւնը այս յատուկ ծրագրին յաջողութեան համար, որ պիտի արժէ 10-12000 Տոլար:

Ձեր նուիրատուութիւնները կրնաք կատարել Նոր Զելանտայի Հայկական Միութեան դրամատնային հաշիւին ինչպէս վարը յիշուած է: Բարեհաճեցէք տալ ձեր անունն ու ազգանունը, որպէսզի կարելի ըլլայ ստացագիր պատրաստել:

Հայերէն Գիրերու նուիրուած Յուշաքարին նկարը կը գտնէք կցուած: Յուշաքարը Նոր Զելանտա պիտի փոխադրուի Հայաստանէն: Ձեր նիւթական օժանդակութեան համար կրնաք դիմել Պարոն Նուպար Եագուպեանի հետ Հեռաձայն 0212502095 կամ իմէյլով՝ noobarh@yahoo.co.nz

DIOCESAN NEWS

EASTER EVENTS

Our communities' faithful enter into the Easter week, through the meditative mysteries of our Holy Lent church services. Our hearts and souls are taken back 2000 years to the patriarchs of our faith, who were concerned and doubtful about the fate awaiting their spiritual teacher, Jesus Christ. The uncertainty, the persecution, the pride, threats and betrayal were at play, fulfilling biblical prophecies; the King was arrested, crucified as a criminal and buried. It was thought that with this burial, everything relevant to Him was buried, His teachings, His Love, His Divinity. Oh the foolishness of man and Oh the wonder! Only three days later it was revealed that Life Himself was not amongst the dead. He was now the Resurrection. It is the celebration of triumphal victory, and not mourning because Life had overcome sin and death. Through His supreme yet loving sacrifice, Christ proved to humanity that the Cross is now the symbol of peace and not pain and suffering. The crucifixion and resurrection carry the message for daily renewal of our Christian faith in order to live life, each day, in victory.



The Resurrected Lord and His Resurrection were celebrated in the community parishes, Chatswood Holy Resurrection, Wentworthville Holy Trinity and Melbourne St Mary's Churches. Easter revitalised us, re-centered us and re-enforced our faith in Christ.



Thursday 29 March – His Grace Bishop Haigazoun Najarian, the Primate of Australia and New Zealand celebrated the Divine Liturgy in commemoration of the Lord's Supper in the morning and in the evening, presided over the Washing of the Disciples Feet service at the Church of Holy Resurrection, washing the feet of over 24 youth, once again a reminder of the identifying feature of Christian character. The presence of these youth, was evidence of the over 20 Armenian parents who had shown their desire for their children to see with their eyes, the portrayal of humility, as displayed by Bishop Najarian. In his sermon, the Bishop reflected on the expression of humility and love, which each faithful Christian is to strive for.

The inspiring Passion Service followed, with Bishop Najarian presiding, Father Patanian, Father Hambarzumyan and Deacons participating. Father Karakashian presided over the Holy Maundy Services in Holy Trinity Church. With his poignant message, Bishop transported the congregation back to the Last Supper, where St Peter denied his Lord, and when Judas sold his Lord ...

Friday 30 March – The Crucifixion of our Lord. The Punishment of the Righteous One, Dishonouring the Saviour, the death penalty imposed on the immortal; the morning service was presided over by Bishop, with the participation of the Holy Resurrection Parish Fathers, followed by the final sorrowful service, the Burial of Christ.

Saturday 31 March – Bishop Najarian celebrated the Easter Eve Holy Mass in Holy Trinity Church and Father Bartevo Karakashian celebrated in Holy Resurrection, with multitudes of community faithful gathered in each parish. The faithful raised their prayers to the Almighty before receiving Holy Communion after completing the 50-day contemplative period of Lent.

Sunday 1 April – Close to a thousand people filled Holy Resurrection Church and the adjoining grounds. Bishop Najarian was the celebrant, with the participation of the Fathers and Deacons, Acolytes and Lousavorich Choir; the procession proceeded from the grounds of the new Diocesan Centre with the Bishop blessing the flock to the singing of worship hymns, pondering the wonder of our Lord, *Herashapar* and *Khorourt Khorin* as they made their way





into the church. Hundreds of faithful received Holy Communion. The Bishop devoted his Easter sermon to the message of the Resurrection and the rebirth of the Armenian nation; urging all to cling to our heritage and our national demands. Following Holy Mass, Bishop, the Fathers, Deacons, Lousavorich Choir members, and the congregation, made their way into the Edgarian Hall, to the singing of hymns, for the Blessing of Residence service.

In the Diocesan Centre, Bishop Najarian with the Reverend Fathers and Diocesan Council members, received community representatives who, as has been customary, extended their Easter congratulation wishes to the Primate. The Diocesan Council Chairman Mr Sarkis Der Bedrossian gave a welcome address; with a deep sense of unity, messages were given by Vache Topouzian (SDHP), Garo Keshishian (ARF), Vicken Kalloghlian (Hamazkaine), Sarkis Manoukian (AGBU) and Adel Kradjian (ARS). Refreshments were prepared and served by the Holy Resurrection Ladies Auxiliary.

